




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7385

632

p-90

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՄԲԱԿԻ ԿՈՄԻՏԵ

Ընթերցարանի
գրադարան

632
բ-90

144



ԻՆՉ ՎՆԱՍ ԵՆ ՀԱՍՑՆՈՒՄ ՎԱՅՐԻ
ԽՈՏԵՐԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԿՌՎԵԼ
ՆՐԱՆՑ ԴԵՄ

2002

Պրոֆ. Պ. ԺՈՒԿՈՎՍԿԻ

Ազգրոնոմ Ե. ԿԼԵՅՆ

632.5
+ 90

39583. աւ

պ

630
48-ժՈ

ԻՆՁ ՎՄՍ ԵՆ ՀԱՍՑՆՈՒՄ
ՎԱՅՐԻ ԽՈՏԵՐԸ ՅԵՎ ԻՆՁՊԵՍ ԼՈՎԵԼ ՆՐԱՆՑ ԴԵՄ

Պրոֆ. Պ. Ժուկովսկի և Ազրոնով ԿԼԵՅՆ

Ռուսերենից թարգմանեց Ա. ՇԵՐԵՆՑ.



ԹԻՓԵԼԻՍ
Հրատարակություն Ս. Ներսիսյանի
1925

1003
10662

080
ՈՅ-ՅԻ

ԻՆՉ ՎՆԱՍ ՅԵՆ ՀԱՍՑՆՈՒՄ ՎԱՅՐԻ ԽՈՏԵՐԸ ԵՎ ԻՆՉ-
ՊԵՍ ԿՈՎԵԼ ՆՐԱՆՅ ԴԵՄ:

Մեր բամբակաբույծներին շատերը, յերբ լսում են, թե ինչ
փնաս են հասցնում վայրի խոտերը—չեն հավատում, ընդհա-
կառակը, նրանք նույնիսկ հավատացած են, թե վայրի խոտերին
սգուտ կա, իբր թե վայրի խոտերը իրենց շուքով պահպանում
են հողը չորանալուց, ուրեմն և խոնավությունը պահում են
հողում ու բամբակենուն պահպանում չորանալուց:

Բայց դա միայն փնասակար հեքյաթ է: Ամեն մի բամբա-
կաբույծ պետք է լավ իմացած լինի ու միշտ հիշի, վոր վայրի
խոտերը յերբեք չեն պահպանի բամբակենուն չորացնուց, բնդ-
հակառակը—նրանք իրենք սաստիկ կերպով չորացնում են բամ-
բակի արքը, վորովհետեւ նրանք բամբակենուց շատ քուր են
խլում:

Իչպես է դա պատահում?

Բոլոր բույսերը—թե նրանք, վորոնց մենք մշակում ենք և
թե նրանք, վորոնք ապրում են անմշակ, որինակ, վայրի խոտե-
րը—բոլորն ել իրենց աճելու ու զարգանալու համար ջրի կարիք
են զգում: Այդ ջուրը բոլոր բույսերը ստանում են հողից: Մի
քանի բույսեր բավականանում են ջրի փոքր քանակությամբ—
մյուսները ընդհակառակ շատ ջուր են պահանջում:

Խոտերի մեկ դեպքատինը ծծում է հողից տարվա մեջ մո-
տավորապես մինչև կես միլլիոն վեդրո ջուր: Մոտավորապես
այդքան ել պահանջում են իրենց կյանքի համար և վայրի խո-
տերը:

Սրանից պարզ է, վոր յեթե արտում բացի բամբակենուց
կան նաև վայրի խոտեր, բամբակաբույծը բոլորովին իզուր կոր-
ցնում է հարյուր հազարավոր վեդրո ջուր, վորը վայրի խոտերը
ծծում են հողից և այդպիսով խլում այդ ջուրը բամբակենուց:

Թիֆլիս, տպարան «Չարիա Վոստոկ»-ի Ս. Յուլուկիձեյի փ. № 4.

Իլավիտ № 715—Տիրաժ 3.000—Պատվեր № 1662.

22595-60

Կնճաճակե—վայրի խոտերը բամբակենու մրցակիցներն են ջրի վերաբերմամբ: Այսինքն, վորքան վոր արտի մեջ վայրի խոտերը շատ են, այնքան շատ ջուր է պետք նրանց և հետևապես այնքան քիչ ջուր է մնում բամբակենուն: Ընդհակառակը, վորքան վոր արք վայրի խոտերից ազատ է, այնքան շատ է մնում բամբակենու անելու եւ զարգանալու համար: Իսկ ինչ վերաբերում է նրան, թե վայրի խոտերը իրենց տերեւներով իբր թե շուք են տալիս բամբակենու ջանել ծիւրերին, և դրանով ոգնում բամբակաբույծի գործին—դա, ինչպես տեսնում ենք, նախապաշարմունք է—ազիտության արդյունք, նման այն բանին, ինչպես գյուղական հերքիմները կտրվածքի վրա խորհուրդ են տալիս սարդի վոստայն դնել, վոր արյունը կանգնի: Այրունը—ճիշտ է կանգնում է, բայց վոստայնի հետ այնքան կեղտ է մտնում վերքի մեջ, վոր վիրավորը արյան վարակումից մեռնում է: Այդպես է և վայրի խոտերի հետ: Իհարկէ նրանք, իրենց տերեւներով շուք են տալիս բամբակենու ջանել ծիւրերին, բայց ցավը նրանումն է, վոր վայրի խոտերը իրենց արմատներով հենց միևնույն բամբակենու ծիւրերից այնքան ջուր են խլում, վոր սրանք կարող են բոլորովին թուլանալ և վոչնչանալ: Դժբախտաբար դու եղբայր ել լինում է հաճախ:

Ուրեմն, վայրի խոտերով ծածկված հողի մեջ ջուրը չի կարելի պահել, դրա համար գոյութիւն ունի բոլորովին ուրիշ միջոց:

Վորպեսզի ջուրը պահվի հողի մեջ բամբակի համար, բամբակաբույծը պարտավոր է բամբակենու արք փխրել, իսկ վայրի խոտերը վոչնչացնել:

Ինչու՞ն է կայանում փխրելու ոգուտը և ինչու փխրելու դեպքում ջուրը հողի միջից քիչ է անհետանում և մնում գլխավորապես բամբակի համար—դրա մասին մանրամասն կերպով գրելված է մի գրքուկում, վորը կոչվում է «Ինչու է հարկավոր և ինչու՞ն է կայանում հողի փխրելու ոգուտը բամբակի մշակման դեպքում»:

Այդ գրքուկում բացատրված է, թե ինչպես բամբակաբույծը հողը փխրելու շնորհիվ կարող է հողի ջուրը տնտեսել, միևնույն ժամանակ հողս տանելով, վորպեսզի վայրի խոտերը ջուրը չհափշտակեն:

Թե վորքան դժուր է ջրի այդ տնտեսութիւնը, կարող է համոզվել ամեն մի բամբակաբույծ, վորը մինչև այժմ կարգին ուշադրութիւն չէր դարձնում հողի մշակման վրա, վորի պատճառով և նրա արտը բարցի էր թողնված, այսինքն սաստիկ ծածկված էր վայրի խոտերով: Յեթե այդ բամբակաբույծը այժմ սկսի մշակել արտը ինչպես հարկն է, այսինքն սկսի հողը փխրել և կովել վայրի խոտերի դեմ, այն դեպքում առաջվա ջրի պաշարով նա հնարավորութիւն կունենա ցանել ավելի մեծ տարածութիւն:

Ամեն մի բամբակաբույծը գիտի, վոր մեղանում ջուրը սակավ է, վոր ջուրը խնայողաբար պետք է գործածվի, վոր քանի խնամքով վարվել ջրելու հետ—այնքան շատ կարելի է բամբակ ցանել—եղ առաջին և յերկրորդ—ազատված ջուրը կարելի է ոգտագործել, մանավանդ ամառվա ժամանակ, ուրիշ ցանքների համար:

Մինչդեռ դուրս է գալիս, վոր վայրի խոտերը իզուր փչացնում են, խլում նրան բամբակից, այսինքն բամբակի բերքը քչացնում և կ'նշանակէ կրճատում են բամբակաբույծի յեկամուտը: Ահա գրանուցն է վայրի խոտերի առաջին վնասը:

Բայց բանից դուրս է գալիս, վոր վայրի խոտերը բամբակից խլում են, վոչ թե միայն նրան անհրաժեշտ ջուրը, այլ ել այն սնունդը, վորը պարտաւորւմ է հողի մեջ բամբակենու համար յեկ վորը վերջինս ծծում է իր արմատներով:

Վայրի խոտերը այստեղ ել հանդիսանում են ինչպես բամբակի մրցակից: Շատ վայրի խոտերը—մանավանդ բազմամյա խոտերը, ինչպես հայտնի է, յերկար արմատներ ունեն: Հասկանալի է, վոր յեթե այդ տեսակ խոտեր շատ կան արտում, նրանք իրենց արմատներով խլում են հողից բամբակենու սնունդը և նրան թուլացնում:

Դուրս է գալիս ուրեմն վոր բամբակաբույծը վարում է, ցանում, ծախս անում, աշխատում նրա համար, վորպեսզի վնասատու վայրի խոտերը բազմաճան, իսկ արժեքավոր բամբակը թուլանա:

Բամբակը ընկճվում է, կարելիւմ է չափով բերք չի տալիս, կորչում է—բամբակաբույծը իր բամբախտության վրա է դանդաղվում, իսկ նրա թշնամին—վայրի խոտերը—վորոնք այդ բամբա-

խառնութեան պատճառն են, ածուծ են ճոխ կերպով հենց բամբակարույծի քթի տակ և նա նրանց փնասը չի ել նկատում:

Բացի դրանից վայրի խոտերը բամբակենուէն հասցնում են ելի մի խոշոր փնաս. նրանք բամբակենուէն ծածկում են արևի լույսը և տաքութիւնը: Իսկ բամբակը—չե վոր դա «արևի զովակ ե», ինչպես ասում են հմուտ բամբակարույծները—ամերիկացիք: Այսինքն բամբակենին իր ուղիղ ածման և զարգացման համար պահանջում է արևի առատ լույս և տաքութիւն: Այդպիսով հասկանալի է, վոր յերբ բամբակի արտը ծածկվում է վայրի խոտերով, բամբակենու ջահել ծիւրը և հետագայում նույնիսկ թփերը, ծաղիկներ և կնգուղները հասնելու ժամանակ, հարկավոր չափով արևի լույս չեն ստանում:

Բայց դա դեռ բոլորը չէ: վայրի խոտերի մեծ փնասը կայանում է նաև նրանում, վոր ցրանց վրա ապաստան են գտնում իրենց համար բամբակի մի քանի փնասատու միջատներ: Այսպես որինակ, բամբակի վոճիլը տարածվում է համարյա թե բոլոր վայրի խոտերի վրա, իսկ հետո նրանցից փոխադրվում է բամբակենու վրա: Կամ թե որինակ, բամբակի կնգուղի վորդի թիթեռը իր ձվիկները սիրում է ածել փշախնձորի վրա: Զվերից դուրս յեկած վորդերը կերակրվելով, իջնում են փշախնձորից հողի վրա, թաղվում են հողի մեջ և հարսնյակ դառնում: Հետո սրանցից նորից թիթեռնիկներ, յեն առաջանում, վորոնք թռչելով բամբակենու վրա, նրա վրա ձվեր են ածում, վորոնցից և առաջանում են բերքը փչացնող վորդերը:

Այդպես ուրեմն, բամբակաբույծը վայրի խոտերից բացի վնաս, վոչինչ չի տեսնում:

վայրի խոտերի պատճառով, բամբակաբույծը իր դաշտից հաճախ կորցնում է մի քանի տասնյակ փութ հնդկավոր բամբակ, վորովհետև վայրի խոտերը բամբակենուց խլում են ջուրը, խլում են սնունդը հողում, արևը ծածկում և բացի դրանից բամբակի ցանքները հաճախ պարգևատրում փնասատուներով:

Այդ պատճառով վայրի խոտերի դեմ մաքառելը բամբակաբույծի ամենաառաջին հոգսերիցը պետք է լինի, վորովհետև իր արտի վայրի խոտերը վոչնչացնելով, բամբակագործը դրանով շատացնում է իր բերքը:

Ինչպես կովի վայրի խոտերի դեմ? Պետք է իմանալ, վոր

վայրի խոտերին հաղթահարել այնքան ել հեշտ բան չի, մանավանդ, յեթե արտը բարձի և թողնված և նրա չորս բոլորը շատ վայրի խոտեր կան:

Աճեցնող, չըհասկացող արհեստը կարող է իր արքը նույնիսկ վերջնականապես փչացնել, յեթե նա չգիտե, թե ինչպես պետք է հաղթել վայրի խոտերին:

վորպես դի հաջող կերպով արտը վայրի խոտերից մաքրել, բամբակաբույծը նախ և առաջ պետք է իմանա թե ինչ խոտեր են առաջացել արտում: Միայն դրանից հետո է նա կարող խոտերի դեմ կովելու ուղիղ միջոցներ ձեռնարկել, վորովհետև զանազան վայրի խոտերի դեմ կովի զանազան միջոցներ կան:

Խոտը խոտից ջուկ է. խոտեր կան, ինչպես որինակ յերինջակը, վորոնց հեշտ կարելի է վոչնչացնել, յեթե ժամանակին նրանց քաղհանել, տակից կտրել, չթողնել վոր նրանք սերմնավորվեն: Չորացած խոտը պետք է վառել: Բայց կա և այնպիսի խոտեր ինչպես որինակ տատասկ (СОТ), շերեփուկը (ВЬЮНОК): Հասարակ քաղքը այստեղ արդեն չի ոգնի և նույնիսկ վարը նրանց չի ջնջում: Ընդհակառակը, վորքան շատ կա արտում այս խոտերից, այնքան նրանք վարից ուժեղ են զարգանում:

Ինչու՞ն է հապա բանը, ինչպես ուղիղ կովի մղել վայրի խոտերի դեմ?

Դրա համար ահա թե ինչ է հարկավոր իմանալ: Քաղհանը, սովորական վարը ել ցափանցել լավ չեմ իրական միջոցներ են գլխավորապես միամյա խոտերի դեմ կովելու համար:

Այս կարգի խոտերին են պատկանում հետեյալ խոտերը: փշախնձորին, յերինջակ, թայլ (հոռոմսպանախ—лебеда), պորտուկակ, քարասերմիկ և այլն:

Պետք է իմանալ, վոր այս վայրի խոտերի սերմերը շատ կենսունակ են, ուրեմն չպետք է թողնել, վոր սրանք ծաղկեն և մանավանդ սերմվեն: Դրա համար լավ է չծուլանալ և վոչնչացնել խոտերի բոլոր ծիւրերը հենց վոր նրանք առաջանան:

Շարքային ցանքսի դեպքում դա շատ հեշտ է կատարվում—շարքամեջը մշակվում է քաղհանիչ մեքենայով: Ինչպես է դա կատարվում, նկարագրված է «ինչու շարքով ցանքը լավ է ցրիլ ցանքից» վերնագրով գրքույկում: Յրիվ ցանքի դեպքում քաղհանը իհարկե ստիպված ենք անել ձեռներով թորխելով (հողուրաքով): Ամբողջ քաղհանած խոտը հարկավոր է հավաքել և չորա-

ցնել շարքամեջերում: Իսկ յերբ նա չորանա, ամենից լավ է վառել:

Այդպիսով մի քանի տարվա ընթացքում կարելի է արտը բոլորովին մաքել միամյա խոտերից յեվ միշտ հետևելով նրան քաղհանելով ամեն մի բուսած խոտ, մաքուր պահել արտը:

Բայց ահա մյուս խոտերի հետ գործը մի քիչ դժվար է: Այդ խոտերի շարքումն են տատասկ, դեղձատերե, մատիտեղ, շամբի (камыш), շերեփուկը, վարադափուշը (КОЛЮЧКА) սորգո և հասարակ սեղ:

Բոլոր սրանք բազմամյա խոտեր են: Սրանք տարբերվում են միամյա խոտերից գլխավորապես նրանով, վոր բազմանում են վոչ թե միայն սերմերով, այլ և առհասարակ հողի տակի հատուկ ցողուններով, վորոնք արմատների հետ նմանութուն ունենալու պատճառով կոչվում են—վերարմատներ, իսկական արմատներից ջոկվելու համար: Այդ վերարմատների շնորհիվ, վայրի խոտերը տարածվում են հողի մեջ և այդպիսով զարգանում:

Թե սրանք ինչ վերարմատներ են, ամեն մի գյուղացի գիտե, յեթե նա գոնե մի անգամ հետաքրքրվել է իմանալ, թե ինչպես են արտում ծլում տատասկը կամ շերեփուկը և այլն: Հողի տակ յերկարվում է հաստ վերարմատը: Նրա վրա տեղ առ տեղ կան հանգույցներ: Այդ հանգույցներից վեր են բարձրանում խոտի ցողունները, իսկ դեպի ցած արմատները և յեթե զգուշությամբ այդ վերարմատը դուրս քաշել, նա դուրս է գալիս երբեմն մեկ սափեն յերկարությամբ, վրան ել տասնյակներով ուրիշ խոտեր:

Ահա այդ վերարմատների միջոցով և զարգանում բազմամյա խոտը առանց սերմերի:

Հասկանալի է ուրեմն, վոր այդ տեսակ վայրի խոտերի դեմ քիչ է քաղհան անելով կովել: Գլխավոր ուշադրությունը պիտի դարձվի նրանց վերարմատները հողից դուրս քաշելու վրա, վորովհետև այդ վերարմատների վրա—ինչպես և կարտոֆիլի վրա կան աչիկներ, վորոնցից և բարձրանում են ցողուններ: Իսկ վարի ժամանակ այդ վերարմատները կտրտվում են խոփով ու ցրվում արտի մեջ: Այդ կտրտված ամեն մի կտորից ծլում են հետո նոր վերարմատներ: Ինչպես կարտոֆիլը, յեթե նրան մի քանի մասերի, կտրտենք և ամեն մի մասը տնկենք առանձին: Այդ դեպքում, ինչպես հայտնի է, ամեն մի կտորից առաջանում է առանձին կար-

տոֆիլի թուփ: Ահա այդ պատճառով, բամբակաբույծը պետք է լավ իմանա իր թշնամիներին—վայրի խոտերին, վորպեսզի չ'սխալվի և իրեն ավելի մեծ վնաս չհասցնի:

Յեթե բամբակաբույծը դաշտը նայելիս, տեսնի վոր նա ծածկված է բազմամյա խոտերով—այդ դեպքում դաշտը հարկավոր է ուղղակի բամբակի համար վարել (կամ թե ցորենի): Սկզբում պետք է վորքան կարելի է շատ վերարմատներ արմատախիլ անել: Դրա համար գոյություն ունեն հատուկ ատամնավոր ցաքաններ: Այդ ցաքանները շատ լավ են արմատախիլ անում վերարմատներին: Արմատախիլ արած արմատները պետք է հավաքել արտի սահմաններում, չորացնել և հետո նրանց վառել:

Եդ ձևով դաշտը մաքրելուց հետո կարելի է սկսել դաշտը բամբակի համար ոգտագործել:

Բայց և հետո բամբակենու աճման ամբողջ ժամանակ բամբակաբույծ չ'պետք է ծուլանա, ընդհակառակը նա պետք է միշտ ուշադրությամբ արտը քաղհանի, վորպեսզի բոլորովին ուժից զցի բազմամյա խոտերի արմատները և բոլորովին վոչնչացնի միամյա խոտերը:

Դյուղացիք պետք է լավ հիշեն, վոր նրանց դաշտերը լեցված են զանազան անպետք խոտերի սերմերով: Բացի դրանից, գյուղացիք պետք է իմանան, վոր այդ խոտերի սերմերը շատ կենսունակ են, նրանց կարող են լինել հողի մեջ 10-ը նույնիսկ 25 տարի յեվ այնուամենայնիվ իրենց ծուլանալուքունը չ'կորցնել:

Ուրեմն, վորքան ել բամբակաբույծը աշխատի, նա իշ արտը մի տարվա մեջ չի կարողանա մաքել, վստեղավոր յեվ ձանձրացուցիչ խոտերից:

Բամբակաբույծը միշտ պետք է ուշադիր լինի. յերեկ բամբակաբույծներից շատ քչերը գիտեն, վոր վայրի խոտերի սերմերը նրանց արեւեմ են ընկնում օրի միջոցով: Դա պատահում է եսպես, բամբակաբույծը ուշադրություն չի դարձնում առուների և ջրանցքների յեղեբքների վրա: Մինչդեռ հենց նրանց վրա են խոտերը ազատ զարգանում, ծաղկում և սերմվում: Նրանց սերմերը ընկնում են ջրի մեջ, ու սրա հետ միասին մուտք գործում բամբակաբույծի արտը:

Այդ պատճառով անհրաժեշտ է առուների եւ ջրանցքների ավերի խոտերը լավ հնձել եւ քույլ չսալ նրանց ծաղկել յեվ սերմվել:

Հենց միևնույն պատճառով խոտերի տարածման դեմն առնելու համար անհրաժեշտ է հնձել նույնպես արտի բոլոր սահմանները (межи) և ուրիշներին համողել միևնույն բանը կատարել, վորովհետև վայրի խոտերի դեմ կովել հարկավոր է միահամուռ ուշափրով, ձեռք ձեռքի տված ամբողջ շրջանի գյուղացիները միասին: Բայց յեթե բամբակաբույծը իր արտի վրա հերթով ցանում է նաև հացահատիկ, այն ժամանակ նա անպայման սերմացուն պետք է մաքրի խոտերի սերմերից: Դրա համար դործ են ածում հատուկ մեքենաներ—երնելու մեքենա, (веялка) գատիչ մեքենա (сортировка):

Դյուղացիք պետք է լավ հիշեն, վոր մեզանում հացահատիկները խիստ աղտոտ են խոտերի սերմերով, յերբեմն պատահում է վոր 10 փութ հացահատիկից դուրս է գալիս մինչև 3 փութ խոտի սերմ:

Պարզ է, վոր յեթե այդպիսի սերմացուն ցանքից առաջ չբամբակի մաքրիչ մեքենաներով, դաշտը մաքրելու ամբողջ աշխատանքը իզուր կանցնի:

Հացահատիկների և բամբակի հերթափոփոխման դեպքում կարելի է հացը հավաքելուց հետո, արտը կեղևել: Դա կարելի է նրա համար, վոր անպետք խոտերը, վորոնք նեղվում էյին մինչև այդ հացի տակ, այժմ սկսվում են արագ կերպով դրսավել և սերմվել դեռ մինչև աշնանային վարը: Հողի կեղևելը վոչ թե միայն վոչնչացնում է խոտերի ջահել ծիլերը, այլև փխրելով հողը, պահպանում է նրան չորանալուց: Հողի կեղևելը կատարվում է բազմախիտության գութանի թեթևակի անցումով:

Վերջապես ամեն տեսակի վայրի խոտերի դեմ կովելու լավ միջոցներիցն է յոնջի (люцерна) մշակումը: Դրա մասին մանրամասն կերպով կ'կարդաք «Բամբակենու պարարտացումը ամենաուժեղ միջոցն է նրա բերքը բարձրացնելու համար» գրքույկում: Յոնջան, ինչպես և կորինթը (коринга) լավ են նրանով, վոր խլացնում են մի յերկու տարվա ընթացքում վայրի խոտերի մեծ մասը և բացի դրանից տնտեսությանը նրանք տալիս են մեծ քանակությամբ սննդարար կեր և հարստացնում են հողը իրենց արմատների առատ ֆնացորդներով (перегной):

Վերջապես չպետք է մոռանալ և անասուններով արտը տրորելը (толока): Միայն թե տրորված արտը չպետք է բարձի թողանել, թե չէ արտը շուտով կծակծկվի խոտերի ահագին քանակությամբ: Այդ պատճառով արտը տրորելուց հետո խոտերը պետք է անխնա վոչնչացնել: Դրա համար լավ է վարվել հետևյալ կերպով, քանի դեռ ծիլերը ջահել են—անասուններին քշում են արտը տրորելու և արածելու: Իսկ յերբ խոտերի ծաղկելու ժամանակն է մոտենում, տրորված արտը պետք է կարելվույն չափով հնձել, վորպեսզի խոտերը չսերմվեն:

Ահա թե ինչպես պետք է վարվի բամբակաբույծը, վորպեսզի փաստառու վայրի խոտերից ազատվի:

Բամբակաբույծը միշտ պետք է հիշի, վոր.

1. Վայրի խոտերը լավ բերի կասաղի բեմամիներն են:

2. Վայրի խոտերը փակում են բամբակենին արեվից, խըլում են նրանից ջուրը յեվ սնունդը յեվ բացի այդ, իբրեվ ապաստան են ծառայում վնասատու միջատների համար:

3. Վայրի խոտերից ամենավնասակալորեն են բազմամյա խոտեր իրենց արմատներով:

4. Դառն բամբակենու համար հերկելուց առաջ պե՛տք է ասամնավոր ցամառով ցամառել, վորպեսզի դուրս բաժել խոտերի արմատները առանց նրանց կտրելու յեվ հավաքածը չորացնել ու վառել:

5. Բամբակենու ամբողջ անման ժամանակ հարկավոր է քաղհան անել և քույլ չսալ վայրի խոտերին վոչ ծաղկել եվ վոչ ել ուրեմն սերմվել:

6. Ուշագրութիւմը պե՛տք է հնձել արտի սահմանները եվ ջրանցքների ու առուների ավերը:

7. Չորացած արմատները յեվ հնձած վայրի խոտերը լավ է վառել:

8. Հացի սերմացուն հարկավոր է մաքրել մաքրիչ մեքենաներով խոտերի զանազան խառնուրդներից:

Ի Ա Ս Ի Ա Գ Ա Բ Ի Ի Յ Ծ Ի Գ Ի Ա Դ Ա Բ Ա Ն

**Անգրկովկասյան Բամբակի Կոմիտեին երեսարակել և
հետևյալ զրկույկները**

Ի. ԲԱԺԻՆ

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՒ ԽՆԱՄԲԸ

- № 1. Բամբակենիի պարարտացները բերքի առատացման նպատակով պայմանն է—**Պ. Մեղվեղեվ:**
- № 2. Ինչ և հարկավոր իմանալ բամբակագործին ջրի մասին, վերպեզի ստանա լավ բերք—**Ինժինե Գ. Մանուչարով:**
- № 3. Ինչու շարքով ցանքը լավ և ցրիվ ցանքից—**Ա. Գրոնով Բ. Զեյզից:**
- № 4. Ինչու և անհրաժեշտ հողի փխրումը բամբակի մշակման համար և ինչու մե և կայանում նրա ոգուտը—**Ա. Գրոնով Ս. Դուգուցից:**
- № 5. Ինչ ֆլաս են հասցնում վայրի խոտերը և ինչպես նրանց հետ կռվել—**Պրոֆ. Պ. Ժուկովսկի և ագրոնոմ Ն. Կլեյն:**
- № 6. Բամբակաբույծ հիշիր Լենինի լոգունգը՝ «Լավ և քիչ բայց լավ»—**Ա. Գրոնով Ն. Տարասինով:**

II. ԲԱԺԻՆ

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ ԵՒ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- № 1. Կագուղի վորդը—բամբակաբույծի ամենամեծ թշնամին է—**Ենսոմուդ ՅԱ. Պրինց,** հանրամատչելի փոխադրություն ագրոնոմ Ն. Կլեյն:
- № 2. Ինչ բան և չոոր և կռիվ նրա հետ—**Պրոպ. Բ. Զայցեվ:**
- № 3. Ինչպես կռվել բամբակենու վոճիլի հետ—**Ենսոմուդ Ն. Արխանգելսկի:**

ԱՄԵՆ ՄԻ ԳՐԳՈՒՅԿԸ ԱՐԺԵ 10 ԿՈՊ.

Անդրբամբակկոմի գրքույկները կարելի է ստանալ շրջանային ագրոնոմներից և մոտակա գործարաններից կամ գնման կայարաններից:

7385



ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0079083

